

վին մեծամասնութիւնն որոշեց՝ որ Սարգիս շու-
 տով քրտորուի, մանաւանդ անոնք՝ որ հակառակ
 էին քաղկեդոնականաց, եւ կը պոռային թէ թող
 հեռանայ Սարգիս, գլուխն երկաթնակաց: Մա-
 թոս՝ վերակացու Սառաֆաց, կ'աղաղակէր որ
 Սարգիս մեղապարտ է եւ արժանի մահու: Խո-
 րագէտն Յակոբ դատը շահեցաւ. իսկոյն ծա-
 նարտակ (Խարէի) մը գրեց եւ յանձնեց Ղազար
 եւ Պետրոս երկու ընկերներու, որոնք եպար-
 քոսին վաճառապետն էին, որպէս զի անձամբ
 եպարքոսին ձեռքը յանձնեն, երբ զինք առան-
 ձին գանեն: Այս ծանարտակին մէջ Յակոբ
 ընդդէմ Սարգսի շատ զրպարտութիւններ գրած
 էր, եւ ի դիմաց ազգին կը խնդրէր, որ Սարգիս
 քրտորուի եւ Եփրոս Մափսայ ամրոցը բանտար-
 կուի, որուն օդը մահաբեր էր: Ղազար եւ Պե-
 տրոս Պատրիարքին թուղթը գիշեր մը յանձնե-
 ցին եպարքոսին, որ կարդալով իմացաւ Յակո-
 բայ խէթն ընդդէմ Սարգսի, եւ ըսաւ երկու-
 քին՝ «Կ'երեւայ թէ ձեր Պատրիարքը կը նա-
 խանձի Սարգսին, որ այնչափ սիրուած է ազգէն.
 կարելի չէ բացակայ մէկն առանց լսելու դատա-
 պարտել. ուստի եթէ ի դատաստանի յանցաւոր
 ելլէ, ոչ թէ քրտորանաց, այլ կախաղանի ար-
 ժանի է:» Միջնորդներն եպարքոսին քղանքը
 համբուրելով՝ պաղատեցան որ հաճի ստորա-
 գրել, եւ Պետրոս ըսաւ եպարքոսին, որ այս
 գործով մեծ վարձքեր պիտի ընդունիս: Ասոր
 վրայ եպարքոսն Բաղիպ փաշա՝ ըսելով թէ
 «Սարգսի արիւնը ձեր գլուխն ըլլայ», ստորա-